ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 37

ք. Երևան **26.02.2018թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/678-18, ՀՀ բնապահպանության 3/02.2/30057-18, ՀՀ գյուղատնտեսության ԱՀ/ԱԲ-2/1341-18, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07/25.2/882-18, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 05/16.3/1032-18, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 02/14.1/3528-18 նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06/11.1/670-18, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՆԳ/909-18 և ՀՀ ԷԵ և ԲՊ նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 01/07/356-18 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Մեղրի համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող 4,72 հա, այդ թվում՝

- գյուղատնտեսական նպատակային նշանակության **4.64404 հա,** որից 0.15658 հա պտղատու այգի (կադաստրային ծածկագրեր՝ 09-037-0101-0056, 09-037-0106-0031) և 4.48746 հա այլ հողատեսք (կադաստրային ծածկագրեր՝ 09-037-0112-0001, 09-037-0101-0001),

- բնակավայրերի նպատակային նշանակության **0.05006 հա** բնակելի կառուցապատման հողեր (կադաստրային ծածկագրեր՝ 09-037-0001-0057, 09-037-0415-0009),

- ջրային նշանակության **0.0259 հա** առվակ (կադաստրային ծածկագիր ՝09-037-0415-0002)

փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքօգտագործման համար տրամադրված հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ռ. Մինասյան